ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 23 փետրվարի

Ուղարկելով սոյն ցուցակս 514 րուբլի յօգուտ Տաճկաստանի սովյալ հայ եղբարց, որը ժողոված է Թիֆլիսում, Արծրունու քարվանսարայում, խնդրեմ բարեհաճեցէք տպագրել յիշեալ նուիրատուների անունները ձեր պատուական «Մշակի» լրագրում։ Վահան Վահանեանց 25 ր., Օհան Տէր-Օհանեանց 25 ր., Քերովբէ Գիւլբանդեանց 15 ր., Եօվանէ Լոմինով 12 ր., Սարգիս Տէր-Սարգսեանց 10 ր., Միխայէլ Սաֆարեանց 10 ր., տ. Նատալեա Սաֆարեանց 10 ր., Պօղոս Սաղոյեանց 10 ր., Աղէքսանդր Շխեանց 10 ր., Աստուածատուր Տէր-Յակովբեանց 10 ր., Միքայէլ Արամեանց 10ր., Ղազար Աղասեանց 10 ր., Միքայէլ Կեանջիցեանց 10 ր., Գեօր Վխատին 10 ր., Նիկալայ Խիթարով 10 ր., Եագոր Եղիազարեանց 10 ր., Գրիգոր Աղաբեկեանց 10 ր., Թումասեանց 10 ր., Օհաննէս Քոչարեանց 10 ր., Եագոր Ջոհրաբեանց 10 ր., Նիկողայոս Փիրիդոնեանց 10 ր., Հեջուբ Հեջուբեանց 10 ր., Մկրտիչ Ռոստոմեանց 10 ր., Գէորգ Քիւրքչեանց 6 ր., Եագոր Ցոլակեանց 6 ր., Պօղոս Պօղոսեանց 6 ր., Յովակիմ Գէորգեանց 6 ր. Մահտեսի Պօղոս Խաչատուրեանց 6 ր., Գրիգոր Ամիրեանց 6 ր., տ. Թագուհի Քիւրքչեանց 6 ր., Մկրտիչ Ջանիբեկեանց 6 ր., Գէորգ Անտոնեանց 6 ր., Պօղոս Դեվոյեանց 5 ր., Արշակ Սարգսեանց 5 ր., Սօղոմոն Բայխողոլեանց 5 ր., Գրիգոր Սերեբրակեանց 5 ր., Մկրտիչ Յովհաննէսեանց 5 ր., Միրզա Տէր-Գրիգորեանց 5 ր., Գէորգ Հեջուբեանց 5 ր., Նարալեանց 5 ր., Եագոր Դէմուրեանց 5 ր., Գրիգոր Ղոնիեվ 6 ր., Եղբարք Ալէքսանեանց 5 ր., Դաւիթ Սարգսեանց 5 ր., Նիկալայ Կոլմանեանց 5 ր., Ստեփան Արասխանեանց 5 ր., Վասիլ Թութունեանց 5 ր., Յարութիւն Աղամեանց 5 ր., Բարուտչեանց 5 ր., Քաթանեանց 5 ր., Գէորգ Սողոմոնեան 3 ր., Մկրտիչ Նալբանդեանց 3 ր., Մարգար Նազարեթեանց 3 ր., Սարգիս Դուլղարեանց 3 ր., Ստեփան Խաչատուրեանց 3 ր., Յակովբ Մինհրեանց 3 ր., Եօվանէ Միրվելով 3 ր., Աստուածատուր Տէր-Օհանէսով 3 ր., Գրիգոր Աբեանց 3 ր., Գէորգ Հախնազարեանց 3 ր., Ոմն 3 ր., Յոնան Պարուն—Սարգիսով 3 ր., Օհաննէս Թորոսեանց 3 ր., Գրիգոր Լալայեանց 3 ր., Յակովբ Վասիլեանց 3 ր., Յովհաննէս Սողոմոնեանց 3 ր., Պատուական Բարխուդարեանց 3 ր., Աղէքսանդր Ալոյեանց 3 ր., Ստեփան Ավտալեանց 2 ր., Օհաննէս Ազիզեանց 2 ր., Վարդան Խորասանեանց 2 ր., Յակոբ Բոշնաղեանց 2 ր., Գրիգոր Յովսէփեանց 2 ր., Արշակ Շարոյեանց 2 ր., Սէրգէյ Դօփիով 2 ր., Ջիմշեր Սունդուկով 2 ր., Միքայէլ Երանոսեանց 2 ր., Եագոր Աղաջանեանց 2 ր., Սիմէօն Մելիք—Ղարագեօզեանց 2 ր., Սարգիս Պետրոսեանց 2 ր., Նիկիտ Մնացականեան Անանեան 2 ր., Հայ ոմն 2 ր., Արտեմ Խնչումեանց 1 ր., Գրիգոր Դեմուրեանց 1 ր., Արտեմ Վարդանեանց 1 ր., Գրիգոր Ստեփանեան 1 ր., Աղա Ղարիբեան 1 ր., Կարապետ Պօյաճեան 1 ր., Յովհաննէս Ֆիրիտոնեանց 1 ր., Աղալոյ Հախվերդեանց 1 ր., Աղէքսանդր Խաչատրեանց 1 ր., Նիկալայ Մասումով 1 ր., Արիստակէս Մխճեանց 10 ր.։ Ընդամենը 514 րուբլի։

Եագոր Մնացականեան Ցոլակեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալցխա, 18 փետրվարի

Լսելով լրագիրներից Վանայ գաւառի մեր ազգայնոց աղէտալի վիճակը, այսինքն սովատանջութիւնը, որը արդէն լսողի վրա մի սարսափ է ձգում և որով նոքա ստիպված են յուսահատութեամբ ձեռքերնին կարկառել դէպի համարեա ռուսահպատակ եղբարց, ուստի մենք ևս ցանկալով որ և է միջոցաւ օգնել նոցա, բաց արինք մի ստորագրութիւն Եղիսաբէթեան ուսումնարանի աշակերտուհեաց մէջ, որոց մասնակցեցին և մի քանի պատուելի տիկնայք և օրիորդներ, որից գոյացաւ 61 րուբլ 55 կոպէկ։

Թէև սա աննշան պէտք է համարել այդպիսի թշուառութեան մը դէմ, բայց մի և նոյն ժամանակ շնորհակալութեան արժանի եռանդ մը տեսնելով նոցա մատաղահաս և փափուկ սրտերում, խնդրում ենք ձեզանից տեղի շնորհել ձեր լրագրի էջերի միում նոցա անունները տպագրութեամբ հանդէս դուրս բերել հանդերձ իւրաքանչիւրի նուիրատուութեամբ, որք են. տիկին Աշխէն Սամուէլեանց 3 րուբլ, տ. Եղիսաբէթ Ջաթալբաշեանց 3 ր., տ. Եղիսաբէթ Յակոբջանեանց 3 ր., տ. Աննա Սուքասեանց 3 ր., տ. Աշխէն Բագրատունեանց 2 ր., տ. Դշխոյի Անոզեանց 1 ր., տ. Նունեայ Սիրունեան 1 ր., տ. Վարդուհի Սիրունեանց 1 ր., տ. Սօֆեայ Օձեան 1 ր., օր. Հայկանդուխտ Բագրատունեան 1 ր., օր. Կատարինէ Հունանցեան 1 ր., օր Փեփրոնեայ Քիստոստուրեան 1 ր., օր. Եղիսաբէթ Պօղոյեանց 1 ր., օր. Սաթենիկ Վարդանեանց 1 ր., օր. Շողակաթ Յարութիւնեան 1 ր., օր. Վերոնիքա Մէղէնճեանց 1 ր., օր. Կատարինէ Մութաֆեան 1 ր., օր. Հռիփսիմէ Աղնաւուրեան 1 ր., օր. Շուշանիկ Ալբերթեան 1 ր., օր. Սօֆիայ Սուքասեան 1 ր., Հռիփսիմէ Բագրատունեան 1 ր., Շուշանիկ Կաղմարարեան 1 ր., Շուշանիկ Պօղեան 1 ր., Շուշանիկ Քիստոստուրեան 1 ր., Շուշանիկ Գասպարեան 1 ր., Եղիսաբեթ Վարդանեան 1 ր., Վերոնիքայ Քիւփէլեան 1 ր., Վարդուհի Ղազարոսեան 1 ր., Սօֆիայ Ղարագէվուրեան 1 ր., Գայիանէ Օձեան 1 ր., տ. Եփիմեայ Վահրամեան և տ. Եղիսաբէթ Սիրունեան 60 ական կոպէկ, Հռիփսիմէ Յարութիւնեան, Թէքլի Ստեփոյեան Սօֆիայ Ճարակեան, Արեգնազան Պապոյեան, Մարիամ Վահանեան, Գայիանէ Պահլաւունի, Երանուհի Մարտիրոսեան, Հայկանուշ Մարտիրոսեան, Շողակաթ Աղամեան, Թրարիոն Աղամեան, Վարդուհի Պայպուրտցեան, Շուշանիկ Ճարակեան, Կատարինէ Յարսեան 50-ական կոպէկ, Կատարինէ Ղասապբաշեան 45 կ., Հեղինէ Ղալամքարեան, Երանուհի Ոսկանեան, Շուշանիկ Եսայախանեան, Թագուհի Պաղչինեան, Վերոնիքայ Պայպուրտցեան, Սօֆիայ Ասլանեան, Վերոնիքայ Ալվարեան, Սրբուհի Քոսեան 40-ական կոպէկ, Եղիսաբէթ Մուրատեան 35 կ., Շողակաթ Վանցեան, Հեղինէ Աղէկեան, Երանուհի Ասլանեան, Շուշանիկ Գէմճեան 30-ական կ., Դշխուհի Պաղչինեան 25 կ., տ. Աննա Բէժանեան, Սրբուհի Սուզանաճեան, Շուշանիկ Գասպարեան, Հռիփսիմէ Զարխճեան, Սօֆիայ Իկիթախնեան, Եղիսաբեթ Սերոփեան, Սրբուհի Սրապեան, Դշխոյի Թուզիկեան, Հռիփսիմէ Մանուկեան, Երանուհի Աղաճանեան, Մարիամ Յակոբեան, Շուշանիկ Պայպուրտցեան, Մարիամ Ղազազեան, Հռիփսիմէ Յարութիւնեան Սրբուհի Բէօրէկչեան, Գայիանէ Յովհաննէսեան, Եղիսաբէթ Դոշեան, Գայիանէ Մանկունեան, Փառանձեմ Սողոմոնեան, Ֆիլոմինէ Ճարեան, Շուշանիկ Ղլդճեան, Գայիանէ Աբրահամեան, Նուարդ Գէմճեան, Պիրճիդէ Քաչուրեան, Աննա Յովհաննէսեան 20-ական կ., Եւպրաքսէ Վանցեան, Սօֆիա Սպանտարեան, Հռիփսիմէ Վարդապետեան, Կատարինէ Աղապաչեան, Մարիամ Մէհդերճեան, Շուշանիկ Գայֆաճեան 15-ական կ., Հռիփսիմէ Ալոճեան, Շուշանիկ Պետրոսեան, Մարիամ Սարսեան, Կատարինէ Գասպարեան, Սաւա Նալբանդեան, Ասմէթ Սպանդարեան, Վերոնիքա Պայպուրտցեան, Եսթէր Ղազազեան, Շողակաթ Հայրապետեան, Շուշանիկ Քիւրքճեան, Շուշանիկ Յարութիւնեան 10-ական կ., Եւգէնիէ Գէորգեան, Իւղաբեր Գէորգեան, Աշխէն Գէորգեան 5-ական կ., օր. Սանդուխտ Բագրատունեան 1 ր., օր. Գայիանէ Տէր-Խաչատրեան 1 ր.։

Օրիորդ Կատարինէ Ճարակեանն ևս, ի նպաստ մեր նպատակին հաւաքեց իր մերձակայ բարեկամուհիներից 17 ր. 80 կ., որոց անունները հետեւեալներն են. տիկին Աննա Յովհաննէսեան 2 ր., տ. Երմոնեա Պուղուղեան 1 ր., տ. Աննա Ճարակեանց 1 ր., Սօֆիայ Ճարակեանց 1 ր., տ. Երանուհի Պաղչինեան 1 ր., տ. Գայիանէ Պուտուղեան 1 ր., տ. Երմոնեա Միքայէլեանց, տ. Տիրուհի Գէմճեան 1 ր., տ. Երմոնեայ Բարսեղեանց, 1 ր., տ. Թրարիոն Մինասեանց 85 կ., տ. Մարիամ Աղասարեան 40 կ., տ. Տիրուհի Սերոբեանց 15 կ., օր. Երանուհի Պուտուղեան 1 ր., օր. Աննա Լազարեանց 1 ր. 20 կ., օր. Սրբուհի Չթճեանց 20 կ., օր. Կատարինէ Ճարակեանց 1 ր., տ. Տուդի Պապոյեանց 1 ր., տ. Բէղիքիա Գեմչեան 1 ր., ընդամենը 79 րուբլ 35 կոպէկ, այս գումարից դուրս գալով փոստայի ծախս, մնացածը 78 ր. 70 կ. կը յանձնեմք ձեր կարգադրութեան որպէս հարկն է։

Եղիսաբէթեան ուսումնարանի վարժուհիք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք երիտասարդ Եղիա Շարբարոնեանից, որ աշակերտ է ԹԻՖԼԻՍԻ Մանդինեանի դըպրոցում, 1 րուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Բացի արդէն ստացված 300 րուբլուց, ստացանք դարձեալ 214 րուբլ Արծրունու հին քարվանսարայի վաճառականներից յօգուտ Վանի սովատանջների։ Ուրեմն ընդամենը այդ քարվանսարայից ստացանք 514 ր.։ Նուիրատու անձանց ցուցակը տպում ենք «Մշակի» մէջ։ Եթէ Թիֆլիսի բոլոր քարվանսարաներում այդ տեսակ ժողովարարութիւն լինէր, մեծ գումարներ կը հաւաքվէին յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ մեր Թղթակիցը ուղարկեց մեզ, որպէս նմուշ, մի կտոր այն հացից, որով այս րոպէիս կերակրվում է Հին-Նախիջեւանի չքաւոր ժողովուրդը։ Այդ հացը ճշմարիտ սարսափելի է. մենք թէև չենք հետազօտել նրան քիմիապէս և միկրոսկոպի օգնութեամբ, բայց և ազատ աչքով պարզ երևում է որ այդ հացի մէջ գրեթէ ցորենի ալիւր չը կայ, այլ նրա կազմող գլխաւոր մասը՝ աւազը, Թեփը և հողն է։ Մենք դիտաւորութիւն ունենք ներկայացնել այդ հացի կտորը Թիֆլիսի բժշկական ընկերութեանը։

—

ժուարացնում էին նրան։ Բայց ուղևորը, երևի, յոգնութիւն չէր զգում, թէև առանց երիվարի էր, թէև հետի էր գնում և հագին ոտնամաններ անգամ չունէր։ Նա գնում էր շտապ քայլերով, առանց կանգ առնելու, առանց իր շուրջը նայելու, կարծես թէ, մի սաստիկ պահանջ մղում էր նրան դէպի առաջ, կարծես թէ, ամեն մի կորցրած րոպէն նրա համար շատ թանգ լինէր։

Ուղևորը մի երիտասարդ էր, համարեա մի և նոյն կերպարանքով, որպէս հագնված էր նախընթաց գիշերում խենթը։ Մի և նոյն քրքրված գինուորի վերարկուն ծածկում էր նրա բոլորովին մերկ անդամները, մի և նոյն թօկի կտորով պընդած ունէր իր մէջքը։ Միայն պակաս էր բոժոժներով զարդարած թաղկեայ գդակը, և կօշկաներկով սևացրած դէմքը, որի վրա այժմ գոյնզգոյն գծեր չէին երևում։ Նրա գլուխը, արեգակի կիզող ճառագայթներից պահպանվելու համար, այժմ ծածկված էր բոլորովին թարմ, և դեռ տերևները չը թառամած պրտուներից հիւսած գլխարկով, որի նմանը իրանց ձեռքով հիւսելով, կրում են մշակները ամառը խոտ հնձելու ժամանակ։ Այդ նահապետական պարզ գլխարկը հովանաւորում էր նրա այրական, բայց նոյն ժամուն տխուր դէմքը, որի վրա նկարված էր խորին յուսահատութիւն, խառնված ներքին վրդովմունքի հետ.... Թէև իր օտարոտի հագուստի մէջ անգամ նա երևում էր խիստ տարապայման մի բնաւորութիւն։

Նրա ականջներին զարկեց մի ձայն, որ աւելի նման էր ձիու խրխնջալու ձայնին։ Նա կանգնեց և ուշադրութեամբ սկսեց նայել իր շուրջը։ Ձայնը կրկնվեցաւ։ Նա ստուգեց, որ ձայնը լսվում էր մերձակայ ձորից, և րոպէական մտածութիւնից յետոյ իր քայլերը ուղղեց դէպի այն կողմը, որ շեղվում էր ուղիղ ճանապարհից։ Փոքր ինչ առաջ գնալուց յետոյ, նա բարձրացաւ մի բլուրի վրա, և արծուի սրատեսութեամբ սկսեց դիտել ձորի խորքը։ Այնտեղ շռայլաբար աճել էին զանազան տեսակ խոտաբոյսեր, որոնց մէջ արածում էր մի թամքած ձի. երևում էին մի խումբ թուփեր, և ուրիշ ոչինչ։ Ուղևորը աւելի ուշադրութեամբ նայելով, նկատեց, որ թուփերի մօտ ցցված էր մի երկայն նիզակ, որի ծայրը փայլում էր արեգակի ճառագայթներից։ «Ուրեմն այստեղ մարդ կայ, մտածեց նա,—և այդ մարդը մենակ պէտք է լինի, որովհետև արածող միակ ձին նրան է պատկանում. և այդ մարդը պէտք է քուրդ լինի, որովհետև նիզակը քրդի է, բացի դրանից, ձիու ասպազէնքը նոյնպէս քրդական են. և այդ քուրդը պէտք է քնած լինի, որովհետև ձիու ոտները շղթայած են, որ հեռու չը գնայ»—իսկոյն նրա գլխում ծագեց մի միտք և նա իջաւ բլուրի գագաթից ձորի մէջ։

Ջրի միջով վազում էր մի փոքրիկ վտակ, որի եզերքը հովանաւորված էին խիտ եղեգնաբոյսերով։ Նա թագնվեցաւ եղեգների մէջ։ Այժմ նա սկսեց աննկատելի կերպով սողալ դէպի այն թուփերը, որոնց մօտ ցցված էր նիզակը։ Օձը իր բոլոր առանձնական դիւրաթեքութեամբ չէր կարող այնպէս սողալ, որպէս այդ համարձակ և ճապուկ մարմինը գալարվում էր խիտ եղեգնաբոյսերի մէջ։ Մեղմիկ քամին նոյն ժամուն օրօրում էր բոյսերի գլխիկները, և նրանցից առաջ եկած սօսափիւնը խլացնում էր թագնված դարանակալի սողալուց պատճառված խշխշոցը, երբ նա անում էր մի անզգոյշ շարժում։ Ամեն ինչ յաջողութիւն էր խոստանում....

Նա արդէն մօտեցաւ թուփերին, որոնց մօտ ցցված էր նիզակը։ Այստեղ նա մի քանի քայլ հեռաւորութեան վրա կանգ առեց, և պահպանելով իր առաջին դիրքը, սկսեց եղեգների միջից նայել։ Եւ իրաւ, թուփերի հովանու տակ պառկած էր մի մարդ, որ կիսով չափ երևում էր։ Նրա հագուստը ցոյց էր տալիս, որ քուրդ է։ Միջօրէի տօթը քշել էր նրան այստեղ հանգստանալու համար։ Արդեօք քնած էր նա, թէ արթուն,—դժուար էր գիտենալ, որովհետև քրդի երեսը դարձրած էր դէպի հակառակ կողմը, իսկ թիկունքը դէպի ուղևորի կողմը։ Նա ամբողջ մարմնով տարածվել էր խոտերի վրա, որոնք ծալվելով նրա ծանրութեան ներքոյ, կազմել էին խիստ փափուկ օթոց։

Ուղևորը դեռ իր դարանից դիտում էր։ Քրդի արթուն, թէ քնած լինելը սաստիկ հետաքրքրում էր նրան։ Եթէ պառկած մարդու երեսը դէպի իր կողմը դարձրած լինէր, նա կարող էր տեսնել, արդեօք աչքերը փակած էին, թէ ոչ։ Ներքին վրդովմունքը սկսեց խռովել նրան և աչքերի մէջ յայտնվեցաւ կատաղի բարկութիւն։ Մտատանջութիւնը ալեկոծում էր նրան, չը գիտէր, թէ ինչ պէտք էր վճռել։ Ինքը անզէն և մերկ, գործ պիտի ունենար մի ոտքից ցգլուխ զինված գազանի հետ։ Բայց պէտք էր վերջացնել.... ժամանակը թռչում էր....ամեն րոպէ թանգ էր նրա համար....Բայց ինչով և ինչպէս վերջացնել....

Մինչ նա այդ մտատանջութեան մէջ էր, նկատեց, որ քուրդը գլուխը վեր բարձրացրեց, նայեց իր շուրջը, նայեց իր ձիու վրա, և երբ տեսաւ, որ նա շատ հեռու չէր գնացել, կրկին գլուխը դրեց իր խուրջինի վրա, որ բարձի տեղ էր ծառայում, և պառկեց։ Ուրեմն նա քնած չէր, և եթէ քնած էր, այժմ զարթեցաւ։ Խռովութեան նման մի բան կրկին ցնցեց ուղևորի դէմքը։ Նրա ունչերը սկսեցին լայնանալ և շրթունքը դողդողալ։ Բայց երբ նրա աչքը ընկաւ նիզակի վրա, տեսաւ, որ նիզակը բաւական հեռու ցցած էր գետնի մէջ, և ուղիղ դէպի այն կողմի վրա, որտեղ թագնված էր ինքը։ Այդ առիթը, կարծես, նրան մի փոքր հանգստացրեց. Նրա դէմքը այժմ խաղաղ կերպարանք ընդունեց և աչքերի մէջ փայլեց ուրախութեան նման մի բան։ Զէնք,—այդ էր հարկաւոր նրան իր դիտաւորութիւնը կատարելու համար.... Յանկարծ, որպէս մի դարանակալ վագր, նա դուրս թռաւ եղեգնաբոյսերի միջից, խլեց նիզակը և արձանացաւ պառկած քրդի առջևը։

—Տուր զէնքերդ, եղաւ նրա առաջին խօսքը։

Քուրդը, տեսնելով այդ այլանդակ կերպարանքը, զինուորի քրքրված վերարկուի մէջ և իր ծաղրական գլխարկով, մի արհամարհական հայացք ձգեց նրա երեսին, և առանց փոխելու իր պառկած դիրքը, ձեռքը տարաւ ատրճանակին, և ուղղելով դէպի խենթը, ասաց.

—Ա՛ռ, ահա...

Ատրճանակը որոտաց և գնդակը անցաւ խենթի կողքի մօտից։

—Անիրաւ, դու ընդդիմանում ես, գոչեց նա և նիզակի ծայրը ուղիղ խրեց քրդի կոկորդի մէջ։ Տաք արիւնը դուրս ցայտեց վէրքից, նրա գլուխը դողդողաց և ընկաւ գետին։

Կրկին բարձրացաւ քուրդը և մի երկրորդ անօգուտ փորձ փորձեց, ձեռքը տարաւ դէպի իր սուրը, կիսով չափ դուրս քաշեց պատենից, բայց ձեռքը թուլացաւ և սուրը մնաց իր տեղում։

—Շո՛ւն, ինչու ես սպանում ինձ... հարցրեց նա մահուան տագնապի մէջ։

—Դու շատ ես սպանել իմ ազգից.... դու շատ ես յափշտակել... ես ձեզանից սովորեցայ սպանելը.... ձեզանից սովորեցայ յափշտակելը.... Ես հեռու ճանապարհ պիտի գնամ... տեսնում ես, ոչ հագուստ ունեմ, ոչ զէնքեր և ոչ ձի։ Քո հագուստը, քո զէնքերը և այդ գեղեցիկ ձին, որ արածում է խոտերի մէջ, ինձ պէտք էին... ես գիտէի, որ քանի շունչդ բերնումդ է, ոչինչ չես տայ ինձ, դրա համար քեզ հանգստացրի.... Գուցէ դու զրկվեցար Բայազէդի կողոպուտից, բայց փոյթ չէ, քո եղբայրները այնտեղ եռանդով գործում են....

Քուրդը ոչինչ չը լսեց. Նրա աչքերը արդէն փակվել էին... և անշունչ դիակը տարածվել էր գետնի վրա։

Այդ բոլորը կատարվեցաւ մի քանի րոպէի մէջ։ Ուղևորը մերկացրեց իր զոհին, նրա դիակը քաշեց, տարաւ և թագցրեց եղեգների մէջ, ծածկեց իր քրքրված վերարկուով, և ինքը հագնելով նրա զգեստները, կրելով նրա զէնքերը,—թռաւ գեղեցիկ ձիու վրա, և շարունակեց իր ճանապարհը....

(Կը շարունակվի)